

## Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության կողմից 2015 թվականին կատարած աշխատանքների վերաբերյալ

Մարզպետը օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ապահովվել է ՀՀ օրենքների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, ՀՀ Կառավարության և վարչապետի որոշումների, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը: 2015 թվականին մարզպետի կողմից ընդունվել են 112 որոշումներ, 147 կարգադրություններ, աշխատակազմի ղեկավարի կողմից արձակվել են 256 հրամաններ. հրավիրվել են մարզխորհրդի 4 նիստեր:

2015 թվականին աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնում մուտքագրվել են 6898 և ելք են արվել 7973 փաստաթղթեր:

Մարզպետը համագործակցված աշխատանքներ է տարել հանրապետական գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունների հետ:

2015 թվականին ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի և ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմերում իրականացվել է մրցույթներ հինգ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների և երկու ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության՝ 100 տոկոս պետության սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների թափուր պաշտոններ զբաղեցնելու համար:

Համապատասխան աշխատակազմերում ատեստավորվել են 1 բարձրագույն, 9-ը գլխավոր և 14 կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողներ:

8 քաղաքացիական ծառայողներն շնորհվել է դասային աստիճաններ:

Սահմանված կարգով իրականացվել է աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կազմակերպման աշխատանքները, ըստ որի գրաֆիկով նախատեսված փարբեր ժամանակահատվածներում երշաբաթվա մասնագիտական վերապատրաստում են անցել աշխատակազմի թվով 21 քաղաքացիական ծառայողներ:

Աշխատակազմում 2015թ դեկտեմբերի 30-ի դրությամբ առկա է 1 թափուր և 1 ժամանակավոր թափուր պաշտոններ:

Մարզպետարանի աշխատակազմը մեծ ուշադրություն է դարձնում քաղաքացիների ընդունելության կազմակերպմանը և վերջիններիս կողմից ներկայացված դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկմանը, սահմանված կարգով դրանց ուսումնասիրմանը: 2015 թվականին մարզպետի մոտ կատարվել է 1572 քաղաքացիների ընդունելություն:

Տարվա ընթացքում ստացվել և ՀՀ Նախագահի ու կառավարության աշխատակազմից ՀՀ Վայոց ձորի մարզպետին են վերահասցեագրվել 51

դիմումներ, որից՝ 7-ը ստացվել են Ջերմուկի, 18-ը Վայքի, 26-ը Եղեգնաձորի տարածաշրջանից: 2015թ 1315 քաղաքացու դրամական օգնություն է տրամադրվել, 83 հաշմանդամներ ստացել են առողջարանային վերականգնողական ուղեգրեր, իսկ 36-ը պետպատվերի շրջանակներում ստացել են համապատասխան բուժօգնություն: Մեր ամենօրյա ուշադրության կենտրոնում են գտնվել նաև քաղաքացիներին հուզող սոցիալ-տնտեսական, կենցաղային, գյուղ տեխնիկա և անասուններ ձեռք բերելու, աշխատանքային, համայնքների խնդիրներին լուծում տալու հարցերը:

Հաշվի առնելով Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-ամյակը ՀՀ Վայոց ձորի մարզպետը 2015թ. մայիսի 6-ի N 40 որոշմամբ ԵԿՄ Եղեգնաձորի տարածքային բաժանմունքին է հատկացրել 250 հազար դրամ, իսկ 2015թ մայիսի 8-ի N 41 որոշմամբ՝ Հայրենական Մեծ պատերազմի Եղեգնաձորի տարածքային խորհրդին է տրամադրել 700 հազար դրամ, իսկ նույն օրվա N 42 որոշմամբ՝ վետերանների Վայքի տարածքային խորհրդին է հատկացվել 300 հազար դրամ: Մեր հոգածության կենտրոնում են եղել նաև մարզի տարեցները, որոնց 2015թ սեպտեմբերի 24-ին մարզպետի N 75 որոշմամբ՝ տրամադրվել է 250 հազար դրամի աջակցություն:

**2015թ. ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետին են դիմել 1572 քաղաքացիներ, որից՝**

1. Դրամական օգնություն	1315
2. Նպաստի հարցերով	6
3. Հողային վեճեր և սահմանների ճշտում	25
4. Խմելու և ոռոգման ջրի բարելավման հարցերով	19
5. Տան և շինությունների վերականգնման և վթարայնության	23
6. Աշխատանքի տեղավորման	32
7. ՏԻ մարմիններից բողոքներ և գյուղի հիմնահարցեր	4
8. Առողջարանային ուղեգրեր տրամադրելու	83
9. Պետ.պատվերով բուժօգնություն	36
10. Որդեգրման հարցերով	2
11. Երեխաներին կրթության առանձնահատուկ պայման. մեջ ընդգրկելու	26
12. Խնամակալություն և հոգեբարձություն սահմանելու խնդրանքով	1

Աշխատակազմի քարտուղարության պետ՝

Հ. Կարապետյան